ՀԷՆՅԷ'ից

ՋԱԻԱԴ ԲԱԼՈՒՂԵԱՆՑԻ

VI

„Jch will meine Seele tauchen
Jn dem Kelch der Lilie hinein...

Երբ կընկղմեմ ես իմ հոգին
Շուշան ծաղկի կոկոնում՝
Թող շուշանը սիրուս մատին
Մի երգ շընչէ զողանջիւն։
Եւ թո՛ւլ երգը թըլպըլտալով,
Ելնէ՛, ինչպէս այն պաչիկ,
Որ նա տըւեց, դողդողալով,
Ինձ մի գիշեր երջանիկ։

VII

„Es stehen unbeweglich
Die Sterne in der Höh'...

Աստղերն անշարժ փայլում են —
Երկնից մեխած բիւր դաստեր,
Միմեանց տըխուր նայում են,
Ասես, սըգում իրանց սէր։
Նրանք խօսում են իրար հետ
Քաղցրը, հարուստ մի լեզուով,

Որը ո՛չ մի լեզուագէտ
Չի ըմբռնի իւր խելքով։
Բայց ես շատ շուտ կորդացի
Եւ երբէք մոռանում—
Ես այդ լեզուն սովրեցի
Շնորհիւ եարիս աչերուն։

VIII

„Warum sind denn die Rosen so blass,
Warum sind denn im grünen Gras
O sprich, mein Lieb, warum?
Die blauen Veilchen so stumm"!

Ինչու՞ վարդը գունատէ այնքան,
Ասա՛, իմ քաղցրիկ, ասա՛, սիրական,
Ինչու՞ է համբը և անխօս ծաղկում
Կապուտ մանուշակն կանաչ դաշտերում։
Ինչու՞ է փրչում Բալասան ծաղկից
Այդպիսի մի հոտ, ասեմ, գիակից
Եւ ո՞ւմ է այնքան թախծագին երգով
Արտուտը կանչում, վերև ճախրելով։
Ինչո՞ւ է դաժան, ցուրտ ու խրստագին
Արեգի տրուած լոյսը մարդերին...
Եւ ինչու՞, ինչու՞ մրռալլէ այնքան
Սմայի աշխարհն, ինչպէս գերեզման։
Ինչու՞ ես ինքս հիւանդ եմ, տրրտում,
Ասա՛, դու իմ սէր, սրրտիս անձկալին—
Ինչու՞, օ, ինչու՞ յուսահատ օրում
Թողեցիր դու ինձ, հեռացար, անգին։

«Ես սիրելեմ վատ ընկերին։
«Զերթա՛ս և դու նոյն շաւղով։...»

Ասա՛ ինձ, ինչու՞ չար դարձայ այսպէս.
Ինչու՞ մաշեցաւ իմ մատաղ հոգիս.

Ինչո՞ւ աշխարհը ընկել է աչքէս.
Տէր իմ, տխո՜ր, ի՞նչ պատահեց սըրտիս։
Ինչո՞ւ անմեղ բառ, մի չընչին վարմունք
Կասկած է այժըմ իմ մէջը ծընում...
Ո՞ւր է այն սէրը, ո՞ւր է սըփոփանք,
Որ ըզգում էի մարդկանց շըրջանում.
Այս ո՞ւրեմ փախչում, ո՜ւր, անհաշտ հոգւով,
Ե՛ւ ինձ, և՛ կեանքին անէծք կարդալով...
Ինչո՞ւ այս աստղեր, ինչո՞ւ այս լուսին
Վաղուան հրապոյրը ինձ համար չ'ունին։
Ինչո՞ւ տղջըկայ հայեացքը մեղմիկ
Զըզւանք է միայն իմ վերայ ազդում...
Ինչո՞ւ այն դիւթիչ ժըպիտը քաղցրիկ
Առաջւայ նըման չի ոգևորում։
Տէր իմ, չեմ եղած երբէք մարդատեաց...
Սակայն ինչո՞ւ ես, ասես, ցընորւած
Կ'ուզէի խեղդել ջոկ-ջոկ ամենքին,
Որ հանգիստ տանէր հիասթափ հոգին։...
Անազնիւ ընկեր, ինչո՞ւ քեզ այնպէս
Սիրում էի ես, անվերջ հաւատում...
Ինչո՞ւ իմ սիրտը հանեցի կըրծքէս
Եւ դըրի մի պէղծ Յուդայի սըրտում։
Այն իդէա՜լը—գըգւած ու շոյած
Երկար և անքուն կէս-գիշերներին...
Սիրած մի անո՜ւն, մըտքե՜ր փայփայած...
Այժմ փողոցո՜ւմ... մատնած ծաղրանքին...
Կեղտո՜ւ, հայհոյո՜ւ այն սըրբատեղին,
Ուր մենք ծընկաչոք կ'ողբայինք գետնին...
Եւ ո՞վ... ընկերըդ—այն «ազնիւ ընկերն»—
Նո՛յն իդէալի, նոյն մըտքի ընկերն...